ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1962 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Հ. ԺԱՄԿՈՉՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ-ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԸՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ». պրակ 1 (Հայ ժողովրդի պատմություն 12 պրակով, Ուսումնական ձեռնարկ Հայկական ՍՍՌ բուհերի համար), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1961։

Սովետական պատմագիտության բուռն վերելքը, հնագիտական նոր հայտնագործումները անհրաժեշտ պայմաններ են ստեղծել հայ ժողովրդի պատմության համալսարանական, ամբողջական, գիտականորեն հիմնավորված դասընթաց կազմելու համար։ Այդ գործին է ձեռնամուխ եղել Երևանի համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնը, որը արդեն լույս է ընծայել նախատեսված 12 պրակից, հայոց պատմության տարբեր ժամանակաշրջաններ լուսաբանող 7 պրակ։

Հնագույն և հին շրջաններին նվիրված առաջին պրակը ուշագրավ մի աշխատություն է, որը անկասկած կարևոր ներդրում է հայագիտության մեջ։ Այն կազմված է երկու մեծ բաժինների մեջ խմբավորված ինը գլուխներից, ժամանակագրական, գրականության, անձնանունների և հատուկ անունների ցանկերից—ընդամենը 396 էջ։

Առաջին բաժինը «Նախնադարյան-համայնական և վաղ ստրկատիրական հասարակությունը Հայաստանում» բաղկացած է չորս գլուխներից, որի առաջին գլուխն է «Նախնադարյան-համայնական հասարակությունը Հայաստանում»։ Որպես հիմք ընդունելով տվյալ ժամանակաշրջանի՝ ըստ աշխատանքային գործիքների և տնտեսության ձևերի առաջադրված պերիոդիզացիան, հեղինակը շարադրում է նրա զարգացման հիմնական էտապները՝ հին և նոր քարե դարերը, բրոնզի դարը և երկաթե դարի սկիզբը։ Առաջին իսկ հայացքից նկատվում է, որ այստեղ տեղ չի գտել պղնձե-քարային դարը (էնեոլիթը), սակայն մոտիկից ծանոթանալիս պարզվում է, որ նրա մի քանի հատկանիշները բերված են նոր քարե դարի հատվածում (էջ 11—17)։ Այնինչ, էնեոլիթը, հանդիսանալով Հայկական լեռնաշխարհի բնակիչների կյանքում մի կարևորագույն էտապ, որը նշանավորվեց մետաղի՝ պղնձի՝ յուրացումով և հասարակության հաստատուն անցումով հավաքչական-որսորդական տնտեսաձևերից երկրագործությանը և անասնապահությանը պետք է առանձին քննության առնվեր։

Երկրորդ գլուխը նվիրված է Ուրարտական պետության պատմությանը և ներկայացված է հետևյալ բաժիններով. Նաիրիի ցեղային միությունը, Ուրարտական պետության կազմավորումը, Ուրարտուն իբրև Առաջավոր Ասիայի հզոր պետություն, Պայքարի ուժեղացումը Ուրարտուի և Ասորեստանի միջև և Ուրարտական պետության թուլացումը, Ուրարտուի տնտեսությունը, Հասարակական և պետական կարգը, Ուրարտական պետության անկումը, Ուրարտական կուլտուրան։

Այս գլխի վերաբերյալ կարելի է աննշան դիտողություններով սահմանափակվել։ Ուրարտական կերամիկայի հատվածում հեղինակը խոսում է կարմիր, ջնարակով և կարմրափայլ գլազուրով զունավորված իրերի մասին (էջ 63)։ Ջնարակի, գլազուրի կիրառումը բնավ էլ հատուկ չէ ուրարտական կավագործության համար։ Ջնարակով պատած առարկաները հազվագյուտ են ուրարտական պեղված կենտրոններում, հանդիպածներն էլ ամենայն հավանականությամբ ներմուծված իրեր են։ Իրենց պատրաստած արտադրանքը ուրարտական կավագործները գերազանցում էին զարդարել անգորաապատման և փայլեցման միջոցով։

Հայ ժողովրդի կազմավորման հարցը շարադրված է պրակի երրորդ գլխում։ Քննության առարկա են դարձել այստեղ առասպելական ավանդությունները հայ ժողովրդի ծագման մասին, հայ ժողովրդի ծագման հարցը պատմագրության մեջ, հայկական ցեղերն ու ցեղային միությունները, հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը։

Հեղինակը ելնում է այն ճիշտ դրույթից, որ հայերենը հնդեվրոպական լեզվախմբին է պատկանում, հետևաբար և հայ ժողովրդի կազմավորման գործում առաջատար դեր են կատարել հնդեվրոպական ցեղերը։ Նա սրանց հավասար դասում է Հայաստա երկրի բնակիչներին և արմեն-

ներին։ Ըստ հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ առաջադրված սխեմայի, հնդեվրոպացի հայասցիները միանում են նույն ցեղախմբին պատկանող արմենիներին, միասին տարածվում Հայկական լեռնաշխարհում և յուրացնում նրա զգալի մասը։ Ամենայն անվերապահությամբ առաջ քաշված այս տեսակետները բավարար չափով չեն հաստատված նույնիսկ մասնագիտական գրականության մեջ, քանի որ հայասցիների հնդեվրոպական բնույթը, դեռևս գիտական չլուծված վեճի առարկա է։ Եթե վերջերս լույս տեսած ընդարձակ և ուշագրավ ուսումնասիրության մեջ փորձ է արված բացահայտելու հայասական լեզվի հնդեվրոպական բնույթը[1], ապա մի շարք գիտնականներ փաստորեն ժխտել են այդ լեզվի առնչությունները հնդեվրոպական լեզվախմբի հետ[2]։ Սակայն, անկախ ամեն տեսակի եզրակացություններից, որին հանգում են լեզվաբանները հայասական լեզվի վերաբերյալ, Հայասա երկիրը պետք է անպայման հաշվի առնել հայ ժողովրդի կազմավորման հարցերը ուսումնասիրելիս։ Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղային միություններից է Հայասա-Ազզին, որը ձուլվել է հայ ժողովրդի մեջ, որոշակի հետքեր թողնելով տեղանունների, պաշտամունքի և գուցե նույնիսկ «հայ» էթնիկական անվան մեջ։

Հայ ժողովրդի կազմավորման հարցերը քննության առնելիս հնարավոր չէ հանգամանորեն չանդրադառնալ խուրրիական ցեղերին, որոնք միայն հարևանցիորեն են հիշվում պրակի մեջ։ Խուրրիների դերը հայկական լեռնաշխարհի հնագույն պատմության համար երկակի է. մի կողմից որպես հայկական լեռնաշխարհի որոշ հատվածներում առաջին պետական միավորի ստեղծողներ, մյուս կողմից՝ որպես կազմավորվող հայ ժողովրդի կարևորագույն բաղադրիչ մաս։

Ինչպես հայտնի է, դեռևս ն. մ. թ. 3-րդ հարյուրամյակից Առաջավոր Ասիայում հանդիպող խուրրիական ցեղերի շարքում տեղի է ունենում քաղաքական կոնսոլիդացիայի պրոցես, որը հանգում է ն. մ. թ. 17-րդ դարում խուրրի-միտանիական պետության կազմավորմանը։ Այդ պետության հիմնական տերիտորիաները ընդգրկում էին Վերին Միջագետքը և հարավային Հայաստանը՝ Վանի ավազանը ներառյալ։ Հնագույն այս պետության առկայությունը Հայկական լեռնաշխարհի թեկուզ և մի հատվածի վրա ինքնին մի ուշագրավ փաստ է ն. մ. թ. 2-րդ հազարամյակի պատմության համար, քանի որ այդ տերիտորիաներում ապրող ցեղերը ներգրավվեցին պետականության ոլորտը և այդ հանգամանքը քիչ նշանակություն չունեցավ իհարկե ավելի ուշ, 1-ին հազարամյակի սկզբներին, մոտավորապես նույն վայրում կազմավորվող Ուրարտական պետության ծագման համար։

Մեծ էր խուրրիական ցեղերի դերը նաև հայերի էթնոգենեզիսի համար։ Փաստերը ցույց են տալիս, որ առնվազն ն. մ. թ. 2-րդ հազարամյակից սկսած խուրրիական ցեղերը բնակություն էին հաստատել Հայկական լեռնաշխարհի ընդարձակ տերիտորիայի վրա։ Այդ հնագույն ժամանակներից մեզ հասած տեղանունների, ցեղանունների, անձնանունների և այլ կարգի նյութերի վերլուծությունը հաստատում է խուրրիների առկայությունը Հայկական լեռնաշխարհի ամենատարբեր վայրերում։ Հյուսիսում խուրրիները հանդիպում են Կուլխա, Դիաուխի, Զարախա, Սուխմի երկրներում, այսինքն Կարսի և Էրզրումի ու նրանցից շատ հյուսիս ընկնող շրջաններում։ Գոյություն ունի այն կարծիքը, որ նույնիսկ հյուսիս-արևմուտքում, Հայասա-Ազզի երկրներում առկա է եղել այս տարրը։ Խուրրիները ապրում էին նաև արևելքում, Արածանիի ներքին հոսանքի շուրջը տեղադրվող Իշուվա երկրում։ Հայկական լեռնաշխարհի հարավային մասը ևս բնակեցված էր խուրրիական ցեղերով, որոնց գտնում ենք հարավ-արևմուտքում Ալշե, Շուպրիա և Կաղմուխի երկրներում, Վանա լճի հարավային մասի՝ Խարուշկիա, Բարխի, Խարխի երկրներում[3]։

Լայնածավալ տերիտորիաներ զբաղեցնող խուրրիական բնակչությունը չէր կարող անհետեվանք չթանալ պատմության թատերաբեմից, երբ Հայկական լեռնաշխարհում սկսվեց հայ ժողովրդի կազմավորումը։ Ընդհակառակը, շատ հավանական է, որ տեղաբնիկ ցեղերի շարքում խուրրիները նշանակալից դեր են ունեցել այդ պրոցեսում։ Ըստ Հերոդոտի դեռևս ն. մ. թ. 5-րդ դարում Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերում հիշատակվում են մատիենները, որոնք ամենայն հավանականությամբ նույն խուրրիներն էին[4]։ Այդ դերի առանձին ասպեկտ-

[1] G. B. Yahukyan, „The Hayaša language and its relation to the Indo-european languages", Archiv Orientalni, Praha, 1961, 29/3, էջ 354—405։

[2] Г. Капанцян, Хайасса — колыбель армян, Ереван, 1948. Ի. Դիակոնով, Խեթերը, հայերը և փոյուգիացիները, «Տեղեկագիր», Հայկ. ՍՍՌ ԳԱ, 1956, № 11։ В. Бунятян, Некоторые вопросы этногенеза армян. «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1961, № 2, էջ 91—123։

[3] Г. Меликишвили, Наири—Урарту, Тбилиси, 1954, էջ 88—104, 108—117.

[4] И. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 139—40, 226:

ները՝ լեզվական[5], պաշտամունքային[6], նյութական կուլտուրայի[7], նոր են բացահայտվում, սակայն արդեն պարզ է, որ խուրրիներին զանց առնելով չի կարելի հասկանալ հայ ժողովրդի պատմության հնագույն և հին շրջանների մի շարք կարևոր երևույթներ։

Չորրորդ գլուխը—«Հայկական հնագույն պետությունը» կազմված է հետևյալ ենթագլուխներից. Հայկական պետության առաջացումը և նրա պայքարը Մարաստանի դեմ, Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի կազմում, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները 6—4-րդ դդ. (մ. թ. ա.)։

Հայկական հնագույն պետության մասին խոսելիս, հեղինակը հիշատակում է ավանդական պատմության տվյալները՝ հայոց առաջին թագավոր Պարույր Սկայորդու մասին (էջ 133)։ Կարծում ենք, որ այս տվյալները ենթակա են վերանայման։

«Հայոց պատմության» 1-ին գրքի 19, 22, 23 և 24-րդ գլուխներում Խորենացին տեղեկություններ է բերում Հայաստանում իշխող Սկայորդիների դինաստիայի մասին։ Ըստ Խորենացու, դինաստիայի առաջին ներկայացուցիչն էր Սկայորդին, որի մոտ ապաստան են գտնում Ասորեստանի Սենեքերիմ թագավորի հայրասպան որդիները։ Հաջորդ իշխանավորը Պարույրն է, Սկայորդու որդին, որը Ասորեստանը կործանելու ժամանակ մարերին օգնելու համար դառնում է հայոց առաջին թագավոր։ Նրանից հետո իշխում է Հրաչեան, Բաբելոնի թագավոր Նաբուխոդոնոսորի ժամանակակիցը։ Խորենացին բավական լավ պատկերացում ունի այդ դինաստիայի ժամանակակից օտար թագավորների ապրած էպոխայի, նրանց հաջորդականության և ժամանակագրական փոխհարաբերության մասին։ Օրինակ, նա ճիշտ է նշում, որ Սենեքերիմ (Սինախերիբ), Ասորեստանի թագավորը իշխել է Նաբուխոդոնոսորի Բաբելոնի թագավորից «80, քիչ ավել կամ պակաս տարի առաջ» (II, 23), քանի որ առաջինի թագավորության թվականները 704—681 են, իսկ երկրորդինը՝ 604—562։

Ապա Խորենացին փաստորեն ակնարկում է Արմե-Շուպրիարի տեղադրության մասին, երբ խոսում է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան, Ասորեստանին սահմանակից, շրջանի մասին, որտեղ գտնվում է Սիմ (Սասուն) լեռը (II, 23)։ Պատմահայրը այս դինաստիան համարում է բնիկ և այդ կապակցությամբ չի թաքցնում իր ուրախությունը։ Հիմք ընդունելով իշխանավորների անձնանունների ստուգաբանությունները, Սկայորդի—սկյութացու որդի, Պարույր—Պարտատուա, Պրոտոթիոս (սկյութական թագավորի անուն), մի շարք ուսումնասիրություններում առաջ է քաշվել Արմե-Շուպրիայում ն. մ. թ. 7-րդ դարում սկյութական դինաստիա իշխելու մասին տեսակետը[8]։

Արմե-Շուպրիայի պատմությունը լուսաբանող ժամանակակից, ստույգ աղբյուրները, ասորեստանյան և ուրարտական սեպագիր արձանագրությունները, չեն հաստատում ավանդության տվյալները այդ դինաստիայի մասին։ Ինչպես հայտնի է, Արմե-Շուպրիան տարբեր անունների տակ հիշատակվում է ն. մ. թ. 12-րդ դարից սկսած որպես մի երկիր, որը մշտական պայքար էր մղում անկախության համար անմիջական իր հարևանների՝ Ասորեստանի և Ուրարտուի դեմ։ Նրա մի քանի իշխանավորների վերաբերյալ, ընդ որում նաև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի մասին, պահպանվել են կարևոր տեղեկություններ։ Այդպես օրինակ, ն. մ .թ. 9-րդ դարից մեզ հայտնի է Շուպրիայի Անխիտե թագավորի անունը[9], նույն դարի վերջերին հիշատակվում է Բիսիրաին արիմացին[10], Մենուա թագավորի (810—786) մի արձանագրությունից ծանոթ է Տիտիանին՝ Արմե-Շուպրիային անմիջական հարևան երկրամասի իշխանավորը[11]։ 7-րդ դարի վերջերին են վերաբերվում Շուպրիայի դեսպանների անունները՝ Իատտա և Արիյակկա[12], Վերջապես Ասարխադդոնի (ն. մ. թ. 680—664) նամակներում, որոնք լուսաբանում են 7-րդ դարի

---

5 Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 104—130։

6 Г. Меликишвили, նշվ. աշխ., էջ 108—117։

7 А. Мартиросян, К предыстории древнейших этапов культуры Армении. «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1, էջ 108։

8 Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 217—219։ Բ. Պիոտրովսկի, Հայ ժողովրդի ծագման հարցի շուրջը, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1945, № 6, էջ 20։ Г. Капанцян, Хайасса — колыбель армян, Ереван, 1948, էջ 149—151, 246:

9 Ассиро-Вавилонские источники по истории Урарту, № 23 (II, 2), 28, 29, 31 (հետագայում АВИУ), Вестник Древней истории, 1951, № 2, 3, 4.

10 АВИУ, № 3.

11 Урартские клинообразные надписи, Москва, 1960, № 42.

12 АВИУ, № 50 (37).

80-ական թվականների դեպքերը, հիշատակվում են Արմե-Շուպրիայի թագավորի և նրա որդիների անունները. Ն(ի)կ-Թեշուբ[13], Շերպի-Թ(ե)շուբ) և Լիգի-Թեշուբ[14]։ Թվարկած անունների վերլուծությունը ճիշտ է արտացոլում Արմե-Շուպրիայի և անմիջական հարևան երկրների էթնիկական կազմը։ Տիտիանի և Բիսիրաին անունները ուսումնասիրողների կարծիքով թրակա-փռյուգիական ծագում ունեն[15]։ Մյուս մի քանի անունները տեղական, ըստ երևույթին, խուրրիական ծագում ունեն։ Միանգամայն խուրրիական կերպար ունեն մեզ հետաքրքրող 7-րդ դարի անձնանունները։ Ինչպես տեսնում ենք, բերված նյութը չի հաստատում ավանդական պատմության տվյալները։ Դեռ ավելին, 673 թ. դեպքերի կապակցությամբ կազմված Ասարխադդոնի արձանագրությունները հանվանե-հական հիշատակում են Արմե-Շուպրիայի թագավորին։ Այդ համարյա թե նույն ժամանակաշրջանն է, երբ ըստ Խորենացու նույն տեղում իշխում էր Սկայորդին։ Այս տարաձայնությունները ստիպում են ուսել բացատրություններ փնտրել Խորենացու տեղեկությունների համար, առաջին հերթին սկյութանուն իշխանավորների մասին։ Այդ տվյալների իմաստը հասկանալու և նրանց պատմական ատաղձը բացահայտելու համար անհրաժեշտ է ծանոթանալ կիմմերական և սկյութական ցեղերի պատմության հետ Առաջավոր Ասիայում։ Փաստերը ցույց են տալիս, որ այդ երկու ցեղերը, որոնք հաճախ շփոթվում են աղբյուրներում, նշանակալից դեր են խաղացել հին արևելյան պետությունների կյանքում[16]։ Այս վաչկատուն ցեղերը հանդես էին գալիս որպես վարձկան խմբեր, որոնք իրենց ծառայությունն էին առաջարկում այս կամ այն պետությանը։ Կիմմերական ցեղերը հանդես են գալիս Առաջավոր Ասիայում ն. մ. թ. 8-րդ դարի երկրորդ կեսում։ Նրանց հաջողվում է պարտության մատնել սկզբում Ուրարտուն, ապա Ասորեստանը։ Ն. մ. թ. 7-րդ դարում նրանք էլ ավելի են ակտիվանում։ Ուրարտացիների հետ միասին կործանում են փռյուգիական պետությունը, մի քանի հարձակումներ կատարում Ասորեստանի վրա։ Նույն ուրարտացիների հետ անմիջականորեն սպառնում են Արմե-Շուպրիային։ Որպես վարձկան մի ջոկատ նրանք հիշատակվում են նաև բուն Ասորեստանում։

Էլ ավելի նշանակալից էր սկյութացիների դերը, որոնք հանդես են գալիս ն. մ. թ. 7-րդ դարի սկզբին։ Նրանց մեջ հայտնի առաջին առաջնորդն էր Իշպակայը, որը մոտավորապես ն. մ. թ. 673 թ. սպանվեց Ասորեստանի դեմ մղված պատերազմում։ Որպես մանեացիների և մարերի դաշնակիցներ սկյութացիները մեծ անհանգստություն էին պատճառում Ասորեստանին։

Իշպակային հաջորդել էր Պարտատուան, Հերոդոտի Պրոտոտիոսը, որը իշխել է մոտավորապես 672 թ. մինչև 654 թ.։ Պարտատուային ասորեստանյան արձանագրությունները ճանաչում են որպես Աշկուզա երկրի, այսինքն՝ սկյութացիների թագավոր։ Ասորեստանցիներին հաջողվում է իրենց կողմը թեքել սկյութական թագավորությունը և Պարտատուան նույնիսկ խնամիական կապերի մեջ է մտնում Ասորեստանի թագավոր Ասարխադդոնի հետ։ Մոտավորապես 654 թ. Պարտատուային հաջորդում է որդին՝ Մադիասը, որը Ասորեստանի դրդմամբ սկզբում պարտության է մատնում կիմմերացիներին Փոքր Ասիայում, հետո հաստատում սկյութացիների գերիշխանությունը Մարաստանում (ն. մ. թ. 652 թ.)։ Այս կապակցությամբ աճում է սկյութացիների դերը Առաջավոր Ասիայում, բայց ոչ երկար ժամանակով։ Մարերի թագավոր Կիաքսարին հաջողվում է մոտավորապես ն. մ. թ. 625 թ. թոթափել նրանց լուծը։ Սկյութական թագավորությունը ընկնում է Մարաստանի ազդեցության տակ, իսկ ն. մ. թ. 590-ական թվականներին՝ իսպառ լիկվիդացվում։ Շատ հավանական է, որ Խորենացու տվյալները ն. մ. թ. 7-րդ դ. Հայաստանում սկյութական դինաստիայի գոյության մասին, Առաջավոր Ասիայում կիմմերացիների և սկյութացիների պատմության հետ առնչվող հանգամանքների և իրադարձությունների կնիքն են կրում[17]։ Դեռ ավելին, թվում է, որ Հայկական պատմական ավանդությունը այս դեպ-

---

13 АВИУ, № 70.

14 АВИУ, № 67.

15 Г. Меликишвили, Наири—Урарту, էջ 245, ծանոթ. 1։ В. Быныцяну, նշված աշխ., էջ 111, ծանոթ. 1։

16 И. Дьяконов, История Мидии, էջ 228—254 և Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, էջ 232—256.

17 Այդպես պետք է բացատրել նաև Կորյունի վկայությունը հայերի Աղքանաղեան, այսինքն սկյութական ազգ լինելու մասին («Վարք Մաշտոցիս», Երևան, 1941, Ա, էջ 22)։ Հնարավոր է նաև, որ այս բնորոշումը ավելի ուշ թարգմանիչներին պատկանող մի մեկնաբանում է, որը ելնում է աստվածաշնչից և չի հանդիսանում մի ինքնուրույն, անկախ տրադիցիա։ (Տե՛ս Մ. Արեղյանի ծանոթագրությունները, էջ 103)։

քերի ազդեցության ներքո փոխ է առել սկյութական Պարտատուա թագավորի անունը և այն ներկայացրել որպես հայերի Պարույր թագավոր։

Ինչպես տեսանք, սկյութացիների Պարտատուան-Պրոտոտիոս թագավորը իշխել էր Ն. մ. թ. 673—654 թվին, այսինքն Ն. մ. թ. 7-րդ դարի առաջին կեսում։ Հայոց Պարույրը հիշատակվում է 612 թ. դեպքերի կապակցությամբ, այսինքն պետք է ենթադրել, որ նա իշխել է 7-րդ դարի վերջերին։ Երկու անվանակիցների առկայությունը 7-րդ դարում, մեկը՝ սկյութացիների մոտ, մյուսը հայերի բավական անհավատալի է թվում, եթե ի նկատի ունենանք ևս երկու հատկանշական զուգադիպումները։ Նորպույն ուսումնասիրողները արդեն ցույց են տալիս, որ հակառակ Խորենացու պնդումներին, Պարույրի բնիկ թագավոր լինելու մասին[18], վերջինս, ինչպես երևում է նույն Խորենացու տվյալներից, սկյութական ցեղից էր։ Մյուս կողմից՝ Խորենացու տեղեկությունը Պարույրի մասին, որպես հայերի առաջին թագավորի, շատ լավ է համընկնում սկյութացիների Պարտատուայի հետ կապված հանդամանքների հետ և փաստորեն նույնպես փոխառություն է։ Հայտնի է, որ ասսուրական սեպագիր արձանագրություններում, ի տարբերություն իր անմիջական նախորդ իշպակայի, որը հիշատակվում է լոկ որպես սկյութացիների առաջնորդ, Պարտատուան ամենայն որոշակիությամբ հատկապես է հորջորջվում իբրև թագավոր[19]։ Հետևաբար սա սկյութացիների առաջին թագավորն էր, մի հանդամանք, որը ևս իր արտացոլումն է գտել Խորենացու Հայոց Պարույրի հատվածում։

Պարտատուայի յուրացումը ավանդության կողմից բացատրվում է նաև այն մեծ դերով, որ նա խաղացել է Ասորիստանի և Առաջավոր Ասիայի կյանքում, որի մասին ակնարկներ կան և Հերոդոտի մոտ։

Սկյութական դինաստիայի մասին տեղեկությունների նմանորինակ մեկնաբանումը չի բացատրում, այլ, ընդհակառակը, վկայում է հայերի որոշակի աղերսակցության մասին կիմմերացիների և սկյութացիների հետ։

Հայտնի է, որ սկյութական թագավորությունը Հայկական լեռնաշխարհին անմիջականորեն հարևան էր և գտնվում էր կամ Մաննայում, այսինքն ուրմիա լճի հարավում[20], կամ Քուռ և Արաքս գետերի ստորին հոսանքների միջև ընկած տերիտորիայում[21]։ Ասորիստանի հետ պատերազմելիս սկյութացիները հիշատակվում են Մարաստանի ասսուրական մարզերում, Մաննայում, այսինքն նույն Ուրմիո շրջանում, բայց նաև Խուրուշկիա կոչված շրջանում, Վանա լճի հարավում[22]։ Ուշագրավ է, հիշատակված վայրերը, բացառությամբ վերջինիս, բավական հեռու էին հայ-արմենների քաղաքական կենտրոն Արմե-Շուպրիայից, բայց Ստրաբոնի մի վկայությունը հայերի տարածման մասին Շուպրիայից մինչև Ադիաբեն և Կալաքեն (XI, 4, 9 և XI, 14, 12), այսինքն արևմտյան Տիգրիսի ակունքներից Արևելյան Տիգրիսի վրայով մինչև Ուրմիայի՝ արևմտյան Տիգրիսի, մեծ Զաբի և Խաբուրի միջև ընկած շրջանները, որոշակի առնչություն կարող է ունենալ սկյութացիների դեգերումների հետ, եթե ճշտվի Ստրաբոնի վկայության ժամանակագրական կողմը։ Վերոհիշյալ վկայությունները սկյութացիների մասին թվագրվում են ամենայն որոշակիությամբ Ն. մ. թ. 675—673 թթ.։ Հայ-արմենների էքսպանսիան դեպի Ուրմիա, որի մասին խոսում է Ստրաբոնը և որը ամեն դեպքում զուտ էթնիկական էր և ոչ թե քաղաքական, սկսվում է, ըստ երևույթին, Ն. մ. թ. 7-րդ դարից, բայց հավանաբար նրա երկրորդ կեսից։ Բայց այս դեպքում սկյութացիների և հայերի շփման կետերը էլ ավելի են աճում։ 652 թ. սկյութացիները նվաճում են Մարաստանը և գերիշխող դիրք ձեռք բերում Առաջավոր Ասիայում։ Նրանց թագավորությունը մի բաց է դառնում Ուրարտուի, Ասորիստանի ծայրամասային երկրների վրա հարձակումներ ձեռնարկելու համար։ Ինչպես հայտնի է, սկյութական հրոսակախմբերը նույնիսկ կտրում անցնում էին հին արևելյան պետությունների տերիտորիաները և հասնում Փոքր Ասիա, Սիրիա, Պաղեստին և անգամ Եգիպտոս։ Այս պայմաններում հնարավոր է, որ Ուրմիո արևմտյան շրջանի հայկական էթնիկական տարրը, եթե նա այդ ժամանակ իսկապես ներթափանցել էր այնտեղ, ընկներ սկյութացիների ժամանակավոր գերիշխանության ներքո։ Բացառված չէ նաև, որ բուն

---

[18] Մեր միջնադարյան հեղինակները է՛լ ավելի որոշակիությամբ են խոսում այս մասին։ Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1853, էջ 14 և Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 45։

[19] АВПУ, № 68 г, 19 և И. Дьяконов, նշվ. աշխ., էջ 246, 272։

[20] R. Ghirshman, „Le trésor de Sakkez Artibus Asiae", XIII, 3, 1950, էջ 201։

[21] И. Дьяконов, նշվ. աշխ., էջ 248 և հաջորդ։

[22] АВПУ, № 65, 68 в, 68 г, 2, 68 г, 15, 18

կենտրոնը, Արմե-Շուպրիան ևս ենթարկված լիներ հարձակումների սկյութացիների կողմից, չնայած, դատելով սկզբնաղբյուրներից, նա 7-րդ դարի երկրորդ կեսում արդեն անկախ մի երկիր էր։ Այս ընդհարումների մասին է վկայում Սեբեոսը, երբ ասում է, որ հայերը կոտորեցին «զհսկայսն (այսինքն սկյութացիներին) որ զուարժողով եղեն... ի միջագետս Ասորւոց»[23]։

Խորենացու մոտ բերված տվյալներից, պատմական կոնկրետ իրադարձությունների արձագանք կարող են լինել Նինվեի և Ասորեստանի կործանմանը հայերի մասնակցելու մասին և այդ օրերին ստեղծված հայ-մարական դաշինքի մասին տեղեկությունները։

Հայտնի է, որ Քսենոֆոնի, ճիշտ է ոչ շատ արժանահավատ աղբյուրի համբավ ունեցող, «Կյուրոպեդիայում» հայերը հիշատակված են ի թիվս Մարաստանի դաշնակիցների, երբ վերջինս զբաղված էր Ասորեստանի նվաճումով։ Կարևոր նշանակություն ունի նաև Ասորեստանի վերջին տարիները նկարագրող Բաբելոնի թագավոր Նաբուպալասարի այսպես կոչված «Գէղդի տարեգրության» տվյալները։ Ասորեստանի կործանմանը մասնակից Մարաստանի թագավոր Կիաքսարը մերթ հանդես է գալիս որպես մարերի թագավոր, մերթ որպես՝ Ումման-մանդայի։ Վերջին տերմինը վեճի առարկա է, բայց բացառված չէ, որ նա ունի ավելի լայն իմաստ և ենթադրում է մարերից բացի նաև այլ դաշնակից կամ ենթակա ցեղեր ու ժողովուրդներ[24]։ Այս դեպքում հնարավոր է կարծել, որ հայերը ևս ի նկատի են առնված այս տերմինի տակ, որպես հիշյալ դեպքերի մասնակիցներ։ Պատմական իրադրության վերլուծությունը ևս կարող է հաստատել Խորենացու այս տվյալների ճշտությունը։ Այսօր ընդունված մի տեսակետ է, որ Ն. մ. թ. 7-րդ դարի երկրորդ կեսում Արմե-Շուպրիան քաղաքական անկախություն էր ձեռք բերել։ Երբ նույն դարի վերջին սկսվեց Մարաստանի և Բաբելոնի գրոհը Ասորեստանի դեմ, Արմե-Շուպրիան որպես վերջինիս ծայրամասային մի երկիր, որը դարեր շարունակ հարձակումների և կողոպտման էր ենթարկվել, պետք է որ միացած լիներ հակաասսուրական ընդհանուր ճակատին։ Դժվար է ասել արդյոք հայ-արմենական ջոկատները, կոնկրետ մասնակցություն ունեցե՞լ են Նինվեի գրավմանը, թե ոչ։ Ավելի հավանական է, որ Արմե-Շուպրիայի միջամտությունը տեղի ունեցած լինի պատերազմի երկրորդ փուլում, երբ ռազմական գործողությունները Նինվեի և Աշշուրի նվաճումից հետո տեղափոխվեցին Ասորեստանի բուն տերիտորիաներից դեպի հյուսիսային և հյուսիս-արևմտյան Միջագետք։ Ն. մ. թ. 610—609 թվականներից սկսած այստեղ, Խարրան քաղաքի շուրջը, դաշնակից մարերի ու բաբելացիների և ասորեստանցիների միջև տեղի ունեցան երկարատև մարտեր, որոնք շարունակվեցին նույնիսկ ավելի հյուսիսում գտնվող Իծծալայի լեռներում։ Հիշյալ վայրը արդեն անմիջականորեն մոտ է Արմե-Շուպրիային և մասամբ այդ պատճառով ենթադրում ենք, որ հայերը մասնակից դարձան այդ պատերազմին։ Սակայն կարելի է բերել և այլ փաստեր։

Ուրարտուի կործանումը և հայկական թագավորության հաստատումը տեղի է ունեցել մարերի և հայերի միացյալ ուժերով։ Այդ դաշնակցությունը, ամենայն հավանականությամբ, ոչ թե հանկարծակի է ձևավորվել, այլ հանդես է եկել Ուրարտական պետության հպատակեցումից առաջ, դեռևս Ասորեստանի դեմ պայքարի ընթացքում։ Այդ երևում է նաև Ասորեստանի դեմ մղած մարտերի ժամանակ մարերի 609 թ. դեպի Ուրարտու կատարած արշավանքից։ Հյուսիսային Միջագետքից, Արմե-Շուպրիայի հարավից ձեռնարկվող այս արշավանքը պետք է անցած լիներ Արմե-Շուպրիայի տերիտորիայով և կատարված լիներ նրա մասնակցությամբ։ Մարաստանի և Արմե-Շուպրիայի հակաասորեստանյան դաշինքը դարձավ նաև հակաուրարտական։

Ջեռնարկի երկրորդ բաժինը՝ «Ստրկատիրությունը Հայաստանում», սկսվում է «Հայկական մանր թագավորությունները 4—3-րդ դարերում (մ. թ. ա.)» գլխով։ Այստեղ տեղ են գտել երկու հարցեր. Հելլենիզմի դարաշրջանը Արևելքում և Հայկական թագավորությունները 4—3-րդ դդ.։

Առարկության է ենթակա գլխի վերնագիրը, որի մեջ «մանր» բնորոշումը ավելորդ է թվում, քանի որ իսկապես ոչ մեծ տերիտորիաների վրա ստեղծվող հայկական պետական կազմավորումների կողքին, քննության առնված ժամանակաշրջանի հենց սկզբին, հիմնադրվում է Երվանդունիների միացյալ պետությունը, որը իր կազմի մեջ էր ընդգրկում Հայկական լեռնաշխարհի զգալի տարածությունները։ Հայտնի է, որ այդ թագավորություններ ժառանգն էր Արմենիա պարսկական սատրապության, որը հույն պատմիչ Քսենոֆոնի վկայությամբ «ընդարձակ մի երկիր էր» (Անաբազիս, III 5, 17)։

---

23 Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 10. Տես նաև Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 218։

24 И. Дьяконов, նշվ. աշխ., էջ 307, ծան. 1, Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 236, ծան. 21։

Ի դեպ, հեղինակը, թվարկելով Ն. մ. .թ 4-րդ դարի Երվանդունիների պետության բազմաթիվ նահանգները (էջ 175), փաստորեն հերքում է վերնագրի ոչ ճիշտ ձևակերպումը։

Հայկական լեռնաշխարհում Սելևկյան գերիշխանության հաստատման հանգամանքները Ն. մ. թ. 3-րդ դարի վերջին, մեր կարծիքով, ճիշտ չեն պատկերված։ Ըստ ձեռնարկի, ստացվում է, որ դեռևս Երվանդունիների պետության վերացումից առաջ և նրան զուգահեռ Հայկական լեռնաշխարհում, Արտաշեսի գլխավորությամբ, հիմնադրվել էր սելևկյան ստրատեգիա։ (Տես էջ 185, 187)։ Երվանդունիների պետության վերջին տարիների պատմությունը լուսաբանող աղբյուրները նման հետևությունների համար հիմքեր չեն տալիս։ Ընդհակառակը, ինչպես երևում է Ստրաբոնի և Մովսես Խորենացու համապատասխան վկայություններից[25], միայն Երվանդ 4-րդի և նրա պետության վերացումից հետո է, որ Արտաշեսը որպես ստրատեգոս, իշխանության գլուխ անցավ։

Հաջորդ վեցերորդ գլխում—«Հայկական կենտրոնացված ստրկատիրական պետությունը»—քննության են առնված հետևյալ հարցերը. Հայկական հողերի միավորումը և միասնական կենտրոնացված պետության առաջացումը, Հայաստանը որպես Առաջավոր Ասիայի հզոր պետություն, Հայ-հռոմեական պատերազմները, Հայաստանի պայքարը իր ինքնուրույնության և հզորության վերականգնման համար։

Հեղինակը բերում է ակադ. Մանանդյանի կարծիքն այն մասին, որ Արմավիրի արձանագրությունների երկրորդ խումբը դամբանագիր է, և տեղադրված է եղել Երվանդի մահարձանի մոտ (էջ 189)։

Մովսես Խորենացու՝ Երվանդի վախճանը պատկերող հատվածում ոչ մի ակնարկ չկա վերջինիս Արմավիրում թաղված լինելու մասին։ Արձանագրությունների տեղանքի ուսումնասիրությունից ևս չի կարելի նմանօրինակ հետևություններ անել։ Վերջապես արձանագրությունների բովանդակությունն էլ ամբողջությամբ վերցրած չի հաստատում բերված կարծիքը[26]։

Ճիշտ չէ նաև այն, որ այդ արձանագրություններից առաջին երկուսը ամբողջ տարվա համար առողջության մաղթանքներ պարունակող մի տեքստ են (նույն տեղում)։

Եթե առաջինը իսկապես ողջույնի մի նամակ է, որպիսին բազմաթիվ անգամ է հանդիպում հելլենիստական աշխարհում, երկրորդի մեջ, ամենայն հավանականությամբ, ֆիքսացիայի է ենթարկվում սելևկյան տոմարի պաշտոնական մուտքը Հին Հայաստան[27]։ Այս արձանագրության վերջում, ըստ երևույթին, ինքնուրույն նշանակություն ունեցող մի հատված կա, քաջառողջության մաղթանքներով՝ ուղղված ոմն Փառնակին։

Արտաշես, Դադարշիշ և Արտուխաս անունների նախնական ձևերի ստուգաբանությունները հայտնի են և նրանք չեն համընկնում իրար հետ։ Այս պատճառով, այդ անունների հաճախակի նույնացումները (էջ 144, 155, 192) իրենց չեն արդարացնում և ամեն դեպքում ավելորդ են այս տիպի աշխատության մեջ։

Փարաքարում գտնված քարե բեկորի վրա, հակառակ ձեռնարկի տվյալների (էջ 192), ոչ Արտաշեսի և ոչ էլ Զարեհի արամեատառ անուններն կան, այլ միայն մի տառ, որի ընթերցումը բավական կասկածելի է։

Զարիշատ և Զարեհավան քաղաքների հիմնադրումը հեղինակը վերագրում է Արտաշեսի հորը՝ Զարեհին, կամ այդ նույն անունը կրող որդուն (էջ 195)։ Սակայն ինչպես հայտնի է, Արտաշեսի հայրը թագավոր չի եղել։ Սևանի արամեատառ արձանագրություններում օրինակ, Զարեհը, ի տարբերություն իր որդու՝ Արտաշեսի, անտիտղոս է։ Մյուս կողմից, Արտաշեսի՝ Զարեհ անունը կրող որդու գոյությունը պատմականորեն չի հաստատվում։ Այդ պատճառով ավելի հավանական է, որ վերոհիշյալ երկու, ինչպես նաև երեք նույնանուն քաղաքները ևս հիմնադրվել են Արտաշես 1-ի օրոք, նրա հոր անունով[28]։

Մի ամբողջական գլուխ, տասներորդը, նվիրված է Հայաստանի տնտեսությանը, հասարակական և պետական կարգին։ Այստեղ շարադրված են հետևյալ հարցերը. Տնտեսության հիմ-

---

25 «Աշխարհագրություն», XI, 14, 5, 15, «Հայոց պատմություն» II, 37—47։

26 К. В. Тревер, Очерки по истории и культуре древней Армении, М.—Л., 1953, էջ 143—145.

27 Ս. Տեր-Հակոբյան, Արմավիրի նորագյուտ արձանագրությունը, Նյութեր Հին Հայաստանի պատմության, Երևան, 1935, էջ 148։

28 Г. Саркисян, Тигранакерт, Москва, 1960, էջ 43.

նական հյուղերը և Հասարակական և պետական կարգը։ Հեղինակը հանգամանորեն է ներկայացրել սովետական պատմագիտության տեսակետները հին Հայաստանում ստրկատիրական կարգեր գոյություն ունենալու մասին։ Սակայն այդ հասարակարգի ամրողջական պատկերը ստեղծելու նպատակով, ինչպես նաև մեջ բերած տեսակետները էլ ավելի ամրապնդելու համար, անհրաժեշտ էր դիմել մի շարք նորագույն աշխատություններին[29], որոնք իրենց արտահայտությունը չեն գտել տեքստում և բացակայում են գրականության ցանկից։ Դրանց մեջ, հայկական աղբյուրների (Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, Զենոբ Գլակ), ինչպես նաև հույն աշխարհագիր Ստրաբոնի հաղորդած հակիրճ, բայց կարևոր տեղեկությունները հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի կարևորագույն հատվածի՝ հողային հարաբերությունների մասին, ուսումնասիրված են հելլենիստական Փոքր և Առաջավոր Ասիայի նյութերի ֆոնի վրա, և համեմատաբար ավելի հարուստ տվյալների օգնությամբ բացահայտված է հին Հայաստանի հողատիրության ձևերի մի քանի հանգուցային հարցերի լուծումը։

Հին Հայաստանում հողի մասնավոր սեփականությունը զարգանալու մասին խոսելիս, այնքան էլ հարմար չէ վկայակոչել Արմավիրի առաջին երկու արձանագրությունների տվյալները (էջ 264), քանի որ նրանք ավելի շուտ չափածո հատվածներ են, որոնք ունեն բարոյագիտական ընդգծված բնույթ, հավանաբար կիրառություն են գտել Արմավիրի հանրածանոթ պատգամախոսարանում[30]։

Ութերորդ գլուխը վերնագրված է «Արշակունյաց թագավորությունը Հայաստանում 1—3-րդ դարերում» և բաղկացած է երկու ենթագլուխներից՝ «Հայկական պետականության վերականգնումը» և «Հայաստանը 2—3-րդ դարերում»։

Հեղինակը արտահայտում է այն միտքը, որ Տրդատ 1-ի ժամանակներից սկսած (մ. թ. 66—100), Գառնին դառնում է հայ Արշակունի թագավորների ամառային նստավայր (էջ 303)։ Սակայն փաստերը ցույց են տալիս, որ մի կողմից Գառնիի անառիկ հռչակված ամրոցը ծառայել է թագավորներին որպես ապաստան, իսկ մյուս կողմից, իրոք այդպիսին, նա գոյություն է ունեցել Տրդատ 1-ից դեռ շատ ավելի վաղ։ Այդ մասին են խոսում հնագիտական կարգի նյութերը, ինչպիսիք են՝ Տրդատից առաջ գոյություն ունեցող պարսպապատի մնացորդները. ն. մ. թ. առաջին դարերին վերաբերվող խեցեղենի, Անտիոքոս 4-րդ Եպիֆանեսի արծաթյա դրամի առկայությունը ամրոցի տերիտորիայում[31]։

Կարևոր ցուցմունք կա այս մասին նաև հռոմեացի պատմագիր Տակիտոսի մոտ, որը հիշատակում է կանգուն, գործող ամրոցը Տրդատի գահակալությունից առաջ ն. մ. թ. 51 թ.։

Որոշակիորեն ասել, թե ե՞րբ է կառուցվել Գառնիի ամրոցը, դժվար է, բայց ավելի հավանական է թվում, որ Արտաշեսյանների օրոք է նա հիմնադրվել։ Գառնիի աշխարհագրական դիրքը Արտաշատի նկատմամբ (ոչ շատ հեռու, բայց խորը նախալեռնային շրջանում թաքնված), ամրոցի կատարած դերը մայրաքաղաքի կյանքում (ապաստան), նրանց երկուսի ընդհանուր ճակատագիրը, հնարավոր են դարձնում այսպիսի կարծիքը։

Զեռնարկը եզրափակվում է «Հայկական հնագույն կուլտուրան» գլխով, որտեղ իրենց արտացոլումն են գտել հետևյալ հարցերը. Գրականություն, ժողովրդական վեպ և թատրոն, Պաշտամունք և տոմար, Հայկական հելլենիստական արվեստը։

Այստեղ բերված մի շարք ուսումնասիրողների կարծիքն այն մասին, որ Արմավիրի արձանագրությունների չափածո տեքստերը վերցված են Արտավազդ 2-րդի ողբերգություններից, չեն համապատասխանում իրականությանը։ Արձանագրությունների թվագրումը ակադ. Մանանդյանի կողմից, ինչպես նաև նոր տվյալները կասկած չեն թողնում, որ նրանք դրոշմված են եղել Արտավազդից դեռ շատ առաջ, ն. մ. թ. 3-րդ դարի վերջերին։

Հայ ժողովրդի պատմության առաջին պրակի բովանդակության հետ թռուցիկ ծանոթությունն անգամ ցույց է տալիս, որ չնայած քննության առնվող ժամանակաշրջանի ընդարձակությանը (Հայկական լեռնաշխարհում մարդկային հասարակության զարգացման սկզբից, հին քարե դարի վաղագույն փուլերից մինչև մեր թ. 4-րդ դարի սկիզբը, ֆեոդալական հասարակու-

---

[29] А. Г. Периханян, Древнеармянские востаники, В. Д. И., 1956, № 2, նույնի, Иеродулы и ἱερόδουλοι храмовых объединении Малой Азии и Армении, В. Д. И., 1957, № 2, նույնի, Храмовые объединения Малой Азии и Армении, Москва, 1959.

[30] К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 110, 122, 125։

[31] Б. Аракелян, Гарни, I, էջ 27 և Гарни, II, էջ 83։

թյան ձևավորումը) և այդ հանդամանքից բխող ընդգրկված նյութի բազմակողմանիությանը և դժվարամատչելիությանը, այն հանդիսանում է միանդամայն հաջողված գործերից մեկը։

Նման տիպի աշխատությունը պետք է հետապնդի երկու նպատակ. ա) հիմնված լինի գիտական, ստուգված նյութի վրա, բ) շարադրանքը մատչելի դարձնի ընթերցողին։

Անցած մի քանի տասնամյակներում Հին Հայաստանի պատմության մի քանի հանգուցային հարցերի մշակման գործում սովետական հայագիտությունը հասել է զգալի հաջողությունների։ Այդ հավասարապես վերաբերում է նախնադարյան-համայնական հնագիտության և նրանից բխող հասարակության զարգացման օրինաչափությունների բացահայտման աշխատանքներին, Ուրարտական պետության պատմության ու կուլտուրայի, հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի, Երվանդունիների, Արտաշեսյանների, Արշակունիների քաղաքական պատմության և այլ խնդիրների լուծմանը։

Թվարկված հարցերը քննության են առնվել մեր պատմագիտության մեջ ինչպես առանձին մենագրություններում, այնպես էլ բազմաթիվ հոդվածներում և ստվար քանակով իրենց արտացոլումն են գտել պրակում։ Սակայն, որպես կանոն, հեղինակը չի բավարարվում մեխանիկորեն կատարված վերաշարադրանքով, այլ փորձում է իմաստավորել, համեմատել, ի մի բերել ու ամփոփել տվյալ հարցի մասին գոյություն ունեցող տեսակետները։ Դեռ ավելին, առաջ քաշված մի շարք հետաքրքիր և կարևոր հարցեր առաջին անգամ իրենց լուծումն են գտնում այստեղ։

Ինչպես անհրաժեշտ է այս տիպի աշխատանքի, ձեռնարկի համար, շարադրանքը ընդունել է բավական համաչափ բնույթ, թեպետ հեղինակը աշխատել է հավասար չափով լուսաբանել հասարակական կյանքի որքան հնարավոր է շատ ասպարեզներ՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, նյութական կուլտուրայի գաղափարախոսության։

Ղեկավարվելով մարքսիստական պատմագիտության սկզբունքներով, հեղինակը ճիշտ է ըմբռնել քննության առնված ժամանակաշրջանի պատմության զարգացման պրոցեսը։ Այդ տեսակետից նա հատուկ ուշադրություն է դարձրել սոցիալ-տնտեսական հարցերին՝ պատմության բոլոր էտապներում—նախնադարյան-համայնական, ուրարտական, հելլենիստական։ Հատկապես մեծ ուշադրություն է դարձված վերջինիս ֆորմացիայի հարցին, որը երկար ժամանակ վեճի առարկա հանդիսանալով, այժմ գնալով ավելի որոշակի լուծում է ստանում Ս. Ա. Երեմյանի, Գ. Խ. Սարգսյանի և Ա. Գ. Փերիխանյանի աշխատություններում։

Դրված լինելով գիտական հիմքերի վրա, պրակը զուրկ չէ հաջող ձեռնարկի մի շարք առավելություններից։ Պատմական պրոցեսը, նրա օրինաչափությունների ընթացքը, դեպքերի և իրադարձությունների փոխադարձ կապը, հեղինակը աշխատել է հստակորեն բացահայտել և պարզաբանել։ Այդ գործում նրան նպաստել է դյուրամատչելի ոճը, խոսքի պարզությունը, անհրաժեշտ դեպքերում դիպուկ ձևակերպումների օգնությամբ խտացած մտքերի արտահայտելու ունակությունը, շարադրանքի տրամաբանական և կուռ կառուցվածքը, հանգամանքներ, որոնք աշխատության դրույթներն ու մտքերը դարձնում են ընդունելի և համոզեցուցիչ մեր հասարակայնության ամենալայն խավերի համար։ Դրա լավագույն ապացույցն ամբողջ տպաքանակի արագ սպառումն է։ Կասկած չի կարող լինել, որ պրակի երկրորդ հրատարակությունը, որի պակասն արդեն զգալի է, կհանդիպի նույն բարյացակամ ընդունելությանը։

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ